ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2014թ-ի մայիսի 15-ին կնքված ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1 ծածկագրով պայմանագրում 2015թ-ի փետրվարի 2-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ-1: Պայմանագրով սահմանվել է, որ Պայմանագրի N 1 հավելվածի 2-րդ չափաբաժնով նախատեսված աշխատանքները կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիմքն վրա:

Փոփոխության պատճառ-2: Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել ծավալների համադրում:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 1 հավելվածի 2-րդ չափաբաժնով նախատեսված աշխատանքների կատարման նպատակով 02.02.2015թ. կնքվել է համաձայնագիր: Փոփոխվել է Պայմանագրի N-1 Հավելվածի 2-րդ չափաբաժնի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում-1: Պայմանագրի N 1 հավելվածի 2-րդ չափաբաժնով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության հիմնավորում-2: ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ-168-Ն որոշման 71-րդ կետի 3-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նասխարարություն**

Համաձայնագիր-1
15.05.14թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «02» փետրվարի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և Ճարտարապետական արվեստանոց «ԶԱԱՐՏ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Զուրաբյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 15.05.14թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Փոփոխել գնման պայմանագրի N-1 Հավելվածի 2-րդ չափաբաժնի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և հաստատել նոր խմբագրությամբ /կցվում է/:

1.2 Պայմանագրի 4.2 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.3. Սույն համաձայնագրի 1.1. կետով կատարված փոփոխությունների պայմանները տարածել 2014 թվականի մայիսի 15-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	Ճարտարապետական արվեստանոց «ԶԱԱՐՏ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Ադամյան-1	ք.Երևան, Մաշտոցի-16/42
ՀՀ ֆինանսների նախարարության	«Յունիբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900013574018, 900013202016	Հ/Հ 24100102754900
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 02572984
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	Ճարտարապետական արվեստանոց «ԶԱԱՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	**Ա.Զուրաբյան**

Հավելված
Հաստատված է
«15» մայիսի 2014թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՀՀ ԿԱ ՊԵԿ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերում լրացուցիչ աշխատանքների և փոփոխությունների կատարման աշխատանքների
(2-րդ փուլ)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախագծման առարկայի նկարագրություն	**2-րդ չափաբաժին** **2-րդ փուլ** **1. Մանրամասերի գծագրեր** **2. Վեց հարկանի ննջարանային մասնաշենքին հարող նոր հրապարակի և ավտոկանգառի բարեկարգում** **3. NN 1, 10, 11 առանձնատները սպասարկող ճանապարհ՝ կից հենապատերով** **4. N 9 առանձնատան հյուսիսից և հարավից հատող հենապատեր** **5. Արտաքին և ներքին լուսավորության էլեկտրական սարքավորումներ** **6. Պահուստային խմելու ջրի ջրամբար և պոմպակայան** **7. Տարածքի բարեկարգում, պարիսպ, ցանկապատ, կանաչապատում** **8. Կոնֆերանս դահլիճ /ձայնային կոնֆերանս կապ, միջոցառումների ձայնային աջակցություն, համաժամանակյա թարգմանություն և ձայանագրման գործառույթով համակարգ/** **9. Հեռահաղորդակցության, տեսահսկման և անվտանգության ցանցեր, ներտարածքային կապի ցանցեր** **10. Ավտոկանգառ 24 ավտոմեքենայի համար՝ -4.25 նիշում** **11. Լրացուցիչ աշխատանքներ** **12. Սողանքային լանջի լրացուցիչ պաշտպանիչ կառուցվածք, առաջացած տարածքի կազմակերպում բացօթյա խաղահրապարակների նպատակով** **13. Տարածքի ոռոգման ցանց** **14. Սպա կենտրոն** **15. Սանհանգույցների ջեռուցվող հատակներ** **16. Արտաքին և ներքին գազամատակարարման համակարգի վերատեղադրում** **17. Տեսահսկման և անվտանգության համակարգերի կառավարման /մոնիտորինգի/ կետ** **18. Տարածքի արտաքին ցանցեր /ներտարածքային 0.4 կՎ մալուխային ցանցեր/** **19. Ուսումնական կենտրոնի գլխավոր հատակագծի փոփոխություններ**
Ճարտարապետա-հատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ	**2-րդ փուլ** **1. Մանրամասերի գծագրեր** Հաշվի առնելով Դիլիջանի կլիմայական պայմանները՝ կազմել նախագիծ, նախահաշիվ գլխավոր մուտքի, հիմնական մասնաշենքի մուտքի, միջազգային գիտաժողովների մեծ դահլիճի մուտքի, 6 հարկանի ննջարանային մասնաշենքի մուտքի և ռեստորանային մասի բաց պատշգամբների ծածկարանների համար, ինչպես նաև առանձին հանգույցների լուծումներ: Ծածկարանների համար օգտագործել մետաղական կոնստրուկցիաներ, ծածկը նախատեսել թրծված ապակուց՝ բացառությամբ միջազգային գիտաժողովի դահլիճի մուտքի ծածկի, որի համար նախատեսել անջրաթափանց ներկով ալյումինե պրոֆիլ: Նախատեսել վեց հարկանի մասնաշենքի վերելակի կարկասի երեսպատում, տանիքներում մետաղական աստիճաններ և այլն: **2. Վեց հարկանի ննջարանային մասնաշենքին հարող նոր հրապարակի և ավտոկանգառի բարեկարգում**

քանդման հետևանքով առաջացած հարթ տարածքի համար կազմել բարեկարգման լրացուցիչ նախագիծ՝ նախատեսելով ավտոկայանատեղ 15 մեքենայի համար: Մասնաշենքի պարագծով նախատեսել անվտանգության բազրիքներ մետաղական կոնստրուկցիաներով:

3. NN 1, 10, 11 առանձնատները սպասարկող ճանապարհ՝ կից հենապատերով

Նախագիծը լրացնել NN 1, 10, 11 առանձնատներ տանող ճանապարհի հատվածով՝ կիրառելով հիմնական ճանապարհի կոնստրուկտիվ լուծումները:

4. N 9 առանձնատան հյուսիսից և հարավից հատող հենապատեր

Ելնելով N 9 առանձնատան ռելիեֆային բարդ տեղանքից՝ փոփոխություններ կատարել N 9 առանձնատան անվտանգության պաշտպանիչ միջոցառումների նախագծում՝ նախատեսելով լրացուցիչ պաշտպանիչ միջոցառումներ:

5. Արտաքին և ներքին լուսավորության էլեկտրական սարքավորումներ

Արտաքին և ներքին լուսավորության սարքավորումների տեղադրման լրացուցիչ նախագծի կազմում՝ համաձայն ներկայացվող տեխնիկական բնութագրերի (ներկայացվում է առձեռն): Տեսականու, քանակի և չափսերի ընտրությունը կատարել համաձայն գեղարվեստակոնստրուկտորական աշխատանքների նախագծի: Սարքավորումների հզորությունների ընտրությունը կատարել համաձայն գործող նորմերի: Սարքավորումների աշխատանքային ռեսուրսը՝ ոչ պակաս քան 30000 ժամը:

6. Պահուստային խմելու ջրի ջրամբար և պոմպակայան

Կազմել պահուստային խմելու ջրի ջրամբարի նախագիծ, նախահաշիվ /տարողությունը՝ 150 մ^3/: Նախատեսել պոմպակայան, որի միջոցով սնող ջրագծից համապատասխան քանակի ջուր մղվի ջրամբար: Նախատեսել կարգավորման ավտոմատ համակարգեր:

7. Տարածքի բարեկարգում, պարիսպ, ցանկապատ, կանաչապատում

Ապահովել ամբողջ համալիրի կանաչապատումը և պարսպապատումը:

8. Կոնֆերանս դահլիճ (ձայնային կոնֆերանս կապ, միջոցառումների ձայնային աջակցություն, համաժամանակյա թարգմանություն և ձայնագրման գործառույթով համակարգ)

Նախատեսել ձայնային կոնֆերենս կապ, միջոցառումների ձայնային աջակցություն և համաժամանակյա թարգմանություն ձայնագրման գործառույթով: Նախագահության սարքավորումների կենտրոնացված վերահսկման հնարավորությամբ:

9. Հեռահաղորդակցության, տեսահսկման և անվտանգության ցանցեր, ներտարածքային կապի ցանցեր

Նախագիծը մշակել համաձայն գործող կանոնների, նորմերի և ստանդարտների նորագույն տեխնոլոգիաների կիրառումով: Ուսումնական կենտրոնի մասնաշենքերում ուսումնական և հասարակական նշանակության, այդ թվում հյուրանոցային համարներում և առանձնատներում նախատեսել հեռախոսային, հեռուստացուցային և համակարգչային ցանցեր: Ուսումնական լսարաններում, գրադարանում, նախասրահում, կոնֆերանս դահլիճում, հինգ հարկանի մասնաշենքի բոլոր հարկերում նախատեսել տեսահսկման ցանցեր: Լողավազանում, խաղասենյակներում, վարչական մասում, ռեստորանում, բիլիարդի սրահում անվտանգության և տեսահսկման ցանցեր: Ննջարանային մասնաշենքի արտաքին տեսահսկման ցանց, ինչպես նաև ամբողջ համալիրի տեսահսկման և ձայնային իրազեկման համակարգ:

10. Ավտոկանգառ 24 ավտոմեքենայի համար՝ -4.25 նիշում

Հաշվի առնելով ուսումնական կենտրոնի առանձնահատկությունները, ցանկալի է վերգետնյա ավտոկայանատեղիները կրճատել ի հաշիվ ստորգետնյա ավտոկայանատեղիի ընդլայնման: Գոյություն ունեցող ստորգետնյա ավտոկանգառն ընդլայնել ի հաշիվ հիմնական մասնաշենքի գլխավոր մուտքի հրապարակի՝ հետևյալ չափերով 34x20 մ, նախատեսել ավտոկանգառի նոր մուտք 6x24 չափերով:

11. Լրացուցիչ աշխատանքներ

Վերակառուցման աշխատանքների ընթացքում անհրաժեշտություն առաջացած լրացուցիչ աշխատանքների համար (ցանկը ներկայացվում է առձեռն) կազմել նախագիծ, նախահաշիվ:

12. Սողանքային լանջի լրացուցիչ պաշտպանիչ կառուցվածք, առաջացած տարածքի կազմակերպում բացօթյա խաղահրապարակների նպատակով

Հաշվի առնելով, որ ուսումնական կենտրոնը գտնվում է սողանքային վայրում, կենտրոնի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով, անհրաժեշտ է կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ, որոնց համապատասխան նախատեսել լրացուցիչ հակասողանքային միջոցառումներ: Հակասողանքային լրացուցիչ միջոցառումների արդյունքում առաջացած նոր տարածքներն /լանջերը/ օգտագործել որպես խաղահրապարակներ:

13. Տարածքի ոռոգման ցանց

Ոռոգման ցանցի համար կազմել նախագիծ և նախահաշիվ: Ապահովելով ամբողջ համալիրի

14. Սպա կենտրոն

Համաձայն գեղարվեստակոնստրուկտորական աշխատանքների նախագծի կազմել նախահաշիվ սպա կենտրոնի համար:

15. Սանհանգույցների ջեռուցվող հատակներ

Հինգ հարկանի և ննջարանային մասնաշենքերի հյուրանոցային համարների, ինչպես նաև մենատների սանհանգույցներում նախագծել ջեռուցվող հատակներ՝ գործող նորմերին համապատասխան:

16. Արտաքին և ներքին գազամատակարարման համակարգի վերատեղադրում

Նախագծման առաջադրանքին համապատասխան, ուսումնական կենտրոնի հիմնական նախագծում կատարված փոփոխությունների հետևանքով առաջացած լրացուցիչ շենք, շինությունների ջեռուցման և տաք ջրամատակարարման ապահովման նպատակով կատարել գազամատակարարման վերատեղադրման նախագիծ՝ հաշվի առնելով լրացուցիչ հզորությունները:

17. Տեսահսկման և անվտանգության համակարգերի կառավարման /մոնիտորինգի/ կետ

Հաշվի առնելով, որ նախագծով նախատեսված հիմնական մասնաշենքում տեղակայված տրանսֆորմատորային ենթակայանը նախատեսվում է տեղափոխել՝ կառուցելով առանձին կանգնած ենթակայան, հիմնական մասնաշենքում գտնվող ենթակայանի տարածքից 32.5 քմ հատվածում նախագծել տեսահսկման և անվտանգության համակարգերի կառավարման /մոնիտորինգի/ կետ (տեխնիկական բնութագրերը ներկայացվում է առձեռն): Կատարողը պարտավոր է տեսահսկման և անվտանգության համակարգերի կառավարման /մոնիտորինգի/ կետի նախագիծ, նախահաշիվ փաստաթղթերը կազմել անվճար:

18. Տարածքի արտաքին ցանցեր /ներտարածքային 0.4 կՎ մալուխային ցանցեր/

Հաշվի առնելով, որ նախագծով նախատեսված հիմնական մասնաշենքում տեղակայված տրանսֆորմատորային ենթակայանը նախատեսվում է տեղափոխել՝ կառուցելով առանձին կանգնած ենթակայան, հիմնական մասնաշենքում գտնվող ենթակայանի տարածքից 19 քմ հատվածում նախագծել հիմնական և ննջարանային մասնաշենքերի էլեկտրամատակարարման գլխավոր բաշխիչ վահանակային կետ: Տրանսֆորմատորային ենթակայանից ապահովել բոլոր օբյեկտների էլ. սնուցում 0.4 կՎ մալուխային ցանցով: Կատարողը պարտավոր է հիմնական և ննջարանային մասնաշենքերի էլեկտրամատակարարման գլխավոր բաշխիչ վահանակային կետի նախագծի փոփոխությունների նախագիծ, նախահաշիվ փաստաթղթերը կազմել անվճար:

19. Ուսումնական կենտրոնի գլխավոր հատակագծի փոփոխություններ

Ուսումնական կենտրոնի նախագծային փաստաթղթերում կատարված փոփոխություններին համապատասխան լրամշակել ուսումնական կենտրոնի գլխավոր հատակագիծը: Կատարողը պարտավոր է Ուսումնական կենտրոնի գլխավոր հատակագծի փոփոխությունները կատարել անվճար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	Ճարտարապետական արվեստանոց «ՋԱԱՐՏ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Ադամյան-1	ք.Երևան, Մաշտոցի-16/42
ՀՀ ֆինանսների նախարարության	«Յունիբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900013574018, 900013202016	Հ/Հ 24100102754900
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 02572984
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	Ճարտարապետական արվեստանոց «ՋԱԱՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	**Ա.Զուրաբյան**

Հավելված
Հաստատված է
«15» մայիսի 2014թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը *	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՖՆ 2015թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
ՀՀ ԿԱ ՊԵԿ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերում լրացուցիչ աշխատանաքների և փոփոխությունների կատարման աշխատանքներ (2-րդ փուլ)	5134	18 530 000	18 530 000	18 530 000	18 530 000	18 530 000	18 530 000	18 530 000	18 530 000	18 530 000	18 530 000	18 530 000	**18 530 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ.Ադամյան-1
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013574018, 900013202016
ՀՎՀՀ 02629081
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար

Ա.Արզումանյան

ԿԱՏԱՐՈՂ

Ճարտարապետական արվեստանոց «ՋԱԱՐՏ» ՍՊԸ
ք.Երևան, Մաշտոցի-16/42
«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24100102754900
ՀՎՀՀ 02572984
Ճարտարապետական արվեստանոց «ՋԱԱՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Զուրաբյան